# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի № 4 որոշման

քաղվածք

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության Բողոքարկման կոմիտեն հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| Նախագահող՝ | Կարեն Հովհաննիսյան |
| Անդամներ՝ | Ռուբինա Մխիթարյան |
| | Կարեն Ասատուրյան |
| | Թամարա Չախոյան |

Նիստի նախագահող նշանակվեց ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի փոխնախագահ Կարեն Հովհաննիսյանը

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեն քննության առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ նախագահի թեկնածու Արաս Օզբիլիզի (այսուհետ՝ Բողոքաբեր)՝ 25.12.2023թ.-ին թվագրված և 26.12.2023թ.-ին «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմարեպության (այսուհետ՝ ՀՖՖ) կողմից ստացված բողոքը՝ 23.12.2023թ.-ին տեղի ունեցած ՀՖՖ հերթական ժողովի 11-րդ օրակարգային կետում ներառված ՀՖՖ նախագահի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու շուրջ (այսուհետ՝ Բողոք), և հիմք ընդունելով ՀՖՖ Գլխավոր քատուղարի ծառայողական գրությունը (29.12.2023թ.), ՀՖՖ Ընտրական կոմիտեի նախագահի գրավոր դիրքորոշումը (28.12.2023թ.), ՀՖՖ կանոնադրության 62-րդ հոդվածի՝ 2-րդ կետը, ՀՖՖ ընտրական կանոնակարգի 9-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 47-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև այլ վերաբերելի ՀՖՖ իրավական նորմերը՝ որոշեց.

## ՈՐՈՇԵՑ

1. Բողոքի՝ թեկնածուների ուսումնասիրության և հաստատման մասով ներկայացված փաստարկները թողնել առանց քննության:
2. 2023 թվականի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած՝ ՀՖՖ հերթական ժողովի 11-րդ օրակարգային կետում ներառված՝ ՀՖՖ նախագահի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը մերժել:
3. Բողոքարկման մարմնի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:

Փոխնախագահ՝

Կարեն Հովհաննիսյան